ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ
№ 22

ՏԱՐԵԿԱՆ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է

Թաւրիզում . . . . . 14 ղրան
Գաւառներում . . . . . 20 ղրան

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Ռուսաստան . . . . . 4 ռբ. 50 կ.
Թուրքիա . . . . . 50 ղրուշ
Եւրոպա . . . . . 12 ֆրանկ
Ամերիկա . . . . . 2 տոլար 5 ս.

Յայտարարութիւնների վճարը
Առաջին երեսում տողատեղը 10 շահի
Զորրորդ „ „ „ 5 „

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐԸ 6 շահի

Խմբագրութեան հասցէն՝ Թաւրիզ
ՄԻՏՔ-ի խմբագրութիւն կամ Tauris (Perse)
Rédaction du journal «MITK»

ՄԻՏՔ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ—ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Մեկ գրողներից խնդրուած գրեն [illegible] և անպայման թղթի առաջին երեսի վրայ։
2. Խմբագրութիւնս իրեն է վերապահում իրաւունք՝ ստացուած յօդուածները փոփոխութեամբ և կրճատումներով հրատարակելու։
3. Մենք մերժում ենք „աւ“ ի և „յվ“ ի ուղղագրական հերձուածը և մեկ ենք վերապահում իրաւունք՝ ստացուած նիւթերը տպել մեր ընդունած ուղղագրութեամբ -ով։
4. Չտպուած կարճ յօդուածները չեն վերադարձնուում։ Ուղարկուած և չտպուած երկար նիւթերը յետ ստանալու համար պէտք է ուղարկել պօստի ծախքը։
5. Չի տպուի ոչ մի յօդուած եթէ դա կեղծ անուան հետ միաժամանակ չի կրի յօդուածագրի անուն ազգանունը։
6. Բաժանորդները թերթ չստանալու դէպքում շուտով տեղեկացնելու են մեզ՝ հակառակ դէպքում խմբագրութիւնս իրեն կերծ է համարում պատասխանատուութիւնից։
7. Չտպուած յօդուածների համար խմբագրութիւնս բացատրութիւններ չի տալիս։
8. Հասցէները փոխելու համար պէտք է մեզ ուղարկել 2 ղրան 10 շահի։

№ 22 1912 Թ. ՇԱԲԱԹ 4 ՕԳՈՍՏՈՍԻ 1912 Թ. № 22

ՅԱՒԵԼՈՒԱԾ „ԱՐԱՐԱՏ“ ԱՄՍԱԳՐԻ[1]

ի 1 յուլիսի 1912 ամի

ՆՈՐԻՆ Ս. ԱԾՈՒԾԵԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՅԱՆՈՒՆ

ԹԱԳԱՒՈՐ ԿԱՑՍԵՐ

„ ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԹԱԳԱՒՈՐ ԿԱՑՍԵՐ

Ամենաբարեպաշտ Թագաւոր, յայսմ նշանաւոր աւուր ս. Օծման իմոյ, բաղդաւոր համարեմ զիս արկանել առ ոտս Ձերոյին Կայսերական Մեծութեան զգացմունս հաւատարիմ հպատակութեանս և ժողովեալ ի ս. Էջմիածին ներկայացուցչաց հօտին իմոյ. վերառաքելով առաջ Միածնէջ Սեղանոյ Ջերմագին աղօթս վասն պարգևելոյ Ձերդ Կայսերական Մեծութեան, Թագուհաց-Կայսրուհեաց և ժառանգին և համայն Օգոստափառ տան բազում ամս ի փառս և յերջանկութիւն Մեծին Ռուսիոյ։

ԳԷՈՐԳ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

2 յուլիսի

«ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ԳԷՈՐԳ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ՅԷՋՄԻԱԾԻՆ

Ի սրտէ շնորհակալ եմ ի Ձէնջ յանձնարարեմ հաղորդել ժողովեալ ներկայացուցչաց հոտին Ձերոյ, Զիմ շնորհակալիս յաղագս աղօթից և բարեմաղթութեանց վասն իմ եւ ամբողջ ընտանեացս։ Առաքեմ առ Ձեզ զսրտագին ցանկութիւնս վասն երկարատև և փառաւոր ծառայութեան Ձերոց ի բարօրութիւն համայն ազգին Հայոց»։

ՆԻԿՈՂԱՅ

[1]) Յուլիս 24-ին Էջմիածնից ստացուած այս հեռագիրը ուղարկուած էր մեզ ի տպագրութիւն։ Խմբ.

ՈՂՋՈՅՆ 60-ԱՄԵԱՅ ՅՈՒԵԼԵԱՐ

ԱՐԱՄԵԱՆ ԴՊՐՈՑԻՆ

Իսրայէլեան մեծահռչակ ու հինաւուրց ժողովուրդը բանաստեղծական մի գեղեցիկ յիշատակ է պահել իւր աւանդական անցեալի մասին։

Եգիպտական անլուր ու անտանելի ծառայութիւնից ազատուելուց յետոյ, նա քայլամոլոր ու տարակուսած թափառում էր Սինայի և հիւսիսային Արաբիոյ անծանօթ անապատներում։

Զմոլորուելու համար այդ անապատներում, ասում է Եհովայի այդ ընտրեալ ժողովուրդի աւանդութիւնը, Աստուած ցերեկը ամպէ եւ գիշերը հրեղէն (լուսեղէն) մի սիւնով առաջնորդում էր Իսրայէլացոց։

Որքան յարմարական է այդ պատկերը Ատրպատականի հայութեան համար, որին Արամեան դպրոցը 60 տարուց ի վեր յիշեալ լուսեղէն սիւնի նման առաջնորդ է եղել նրա տխուր ու բազմավէր իրականութեան մէջ և խաւար կեանքի անծանօթ ու անկոխ բաւիղներում։

Ի՞նչ էր մեր հայ կեանքը սրանից 60-70 տարի առաջ։ Ի՞նչ ձգտումներ ու իդէալներ ունէինք այդ կիսադարեան անցեալում։

—Անգիտակցական մի թշուառ գոյութիւն, անիմաստ ու խարխափական մի դատարկամիտ ապրում։ Ոչինչ թուիչքներ և ոչ մի հասարակական համագործակցական ու շինարար գործունէութեան ցանկութիւն ու ձեռնարկ։

Սակայն այդ մռայլ, անգիտակցական ու աննպատակ մեր կեանքը սկսեց փոխուել զգալիօրէն այն օրից, երբ մի բաղդաւոր օրում՝ մեզանում հիմնարկուեց Արամեան դպրոցը, որի գլխով անցել են արդէն վաթսուն եւ աւելի տարիներ։

Դա մի պատկառելի ժամանակաշրջան է, որ պէտք է յաւերժացնել մի տօնեի յոբելեանով։

Ո՛րպիսի թշնամանք, դժուարութիւններ, արգելքներ և անգամ հալածանքներ չի յարուցել մեր մօտիկ անցեալի տգիտութիւնը դպրոցը հիմնարկող և յիշատակարժան Սահակ եպս. Սաթունեանի դէմ։

Մեր պապերի տգիտութիւնը աւելի թանկ է գնահատել արդէն փոշիացած ժեռեաների անարժէք ոսկրոտին քան դպրոցը, քան լոյսն ու գիտութիւնը։ Եւ մարդիկ բահն ու բրիչը վերցրած՝ քանդել են օրհնութեամբ հիմնարկուած դպրոցի պատերը։

Բարի հայրը գերծ չէ մնացել անէծքից ու մօրուքի փետումից անգամ այն մարդոց կողմից, որոնք խաւարը պինդ գրկած ասել են. «Զենք ուզում վարժատուն, մի քանդիր մեր գերեզմանատունը»։

Վերջին այս խօսքերը բաւական են արդէն բնորոշելու մեր ոչ հեռու անցեալի ողորմելի կեանքը, տափակ հասկացողութիւնը և անբովանդակ կենցաղավարութիւնը։

Սակայն համբերութիւնը, իւր խաւարասէր ժողովրդին լուսաւորելու մեծ ու դժուարին գործի սէրն ի վերջոյ յաղթող են հանդիսանում։

Եւ մի յիշատակելի օրում գերեզմանատան խաւարի միջից, կամ մեռելութեան թագաւորութիւնից գլուխ է բարձրացնում լուսոյ ու կենդանագործութեան տաճարը-Արամեան դպրոցը, գիտութիւն ճշմարտութիւն և բարոյականութիւն տարածելով իւր շուրջը։

Այնուհետև մեր, իրօք, անուսում բայց խիստ ուսումնասէր հայրերը, թանկ գնահատելով դաւիք սերնդի կրթական գործը, լիառատ դրամներ նուիրաբերելով եռանդուն ու յամառ գործունէութեամբ այդ մանուկ դպրոցը բարձրացնում են մինչև Դ. դասարան։

Ասիական խաւարում և ֆանատիկ մեր հարևանների մէջ՝ դա իրօք որ մի մեծ հիմնարկութիւն էր և գրեթէ մի միջնակարգ դպրոց, որ օր աւուր կերպարանափոխում, բարելաւում և առաջ էր մղում մեր նախկին յոռի ու անմէջ կեանքը դէպի լոյս, դէպի գիտութիւն և դէպի ճշմարտութիւն։

Կարճ ժամանակում մեր կեանքն ու հորիզոնը լուսաւորող Արամեան դպրոցը հռչակ է հանում ոչ միայն Ատրպատականում, Պարսկաստանում, այլ և Կովկասում և այլուր, ուր արդէն մի խոշոր հիմնարկութիւն էր համարւում այդ հաստատութիւնը։

Այդ մանուկն այսօր արդէն մի պատկառելի ծերուկ է, հպարտ իր օգտաշահ անցեալով։

Նա այժմ մեծ ինքնաբաւականութեամբ կարող է նայել անցած դժուարին ճանապարհը, նայել իր դիմաց և բազմաթիւ տասնեակներով համարել իւր սնուցած սաներին։ Շատ են այդ սաները և նոցա կարելի է տեսնել պատուաւոր տեղեր գրաւած վաճառականութեան, ուսուցչական, բժշկական աշխարհում, բանկային հիմնարկութիւններում, գրասենեակներում, պոստ ու մաքսատներում, պետական ծառայութեան, այլ և նաւթարդիւնաբերական խոշոր ընկերութեանց մէջ և կեանքի այլ ասպարէզներում։

Տարաբաղդաբար 1901 թուականը Թաւրիզի մի կարգ հայ առեւտրականների-որոնց մօտ շահով էին տրուած դպրոցապատկան խոշոր գումարներ-անանկութիւնը շատ մեծ հարուած հասցրեց այդ ծաղկած ու ծաղկող Արամեան մեծանուն դպրոցին, որ այդ միջոցին իւր լաւագոյն շրջանումն էր գտնւում և ունէր տղայոց Ե. իսկ օրիորդաց՝ Դ. դասարաններ, Կովկասեան մեր թեմական դպրոցների ծրագրով։

Իարեկիրթ և յառաջադէմ ազգերի մէջ՝ այդպիսի օգտաշահ հիմնարկութեանց և կամ հասարակական արժանաւոր գործիչների գնահատում են յոբելեաններով՝ յերախտագիտութիւն և իքաջալերս նոցա։

Նման մի երախտագիտական պարտականութիւն ծանրանում է և Թաւրիզեցոց, մանաւանդ Ղալացոց վրայ՝ յաւերժացնելու իրենց լուսոյ մօր յիշատակը։

Ուստի թող այս 1912 թիւը, երբ արդէն նոր հոգաբարձական կազմի մէջ են նրա նախկին և այժմ հասարակական շատ պատկառելի դերք ունեցող սաներն ու երբեմնի երախտաւորները, լինի մեր ալեր Արամեան դպրոցի վերածաղկման, վերստին բարձրացման, հզօրացման և առաջդիմութեան նշանակալից տարին։

Յուսանք այս յոբելեանի իրականացումն ու տօնումը կլինի նորընթեր հոգաբարձութեան յիշատակելի և անմոռ գործերից մէկը։

Քաղաքացիներ, թաղեցիներ, և նախկին երախտապարտ սաներ, շտապենք շուտով և ամենայն փութահեղութեամբ ու հանդիսաւորութեամբ տօնել մեր բոլորիս պարծանք Արամեան դպրոցի 60-ամեակը, որը միաժամանակ 60-ամեակն է և ձեր-նրան սնուցող, պահող Ղալացիներիդ, Թաւրիզի հայ ժողովրդի-որ զոհաբերելով ամեն ինչ՝ կանգուն էք պահել 61 տարի բոլորող ձեր լուսոյ այդ համեստ

տաճարը։

Ողջոյն յոբելեար Արամեան դպրոցին։

Ողջոյն Նրա սեպհականատէր Ղալայի ծխականներին և Թաւրիզի հայ ժողովրդին։

ՊԱՏՄԱԿԱՆ ՆԻՒԹԵՐ[1])

ԱՐԱՄԵԱՆ ԴՊՐՈՑԻ 60-ԱՄԵԱԿԻ ՀԱՄԱՐ

—

Նորընտիր գործադիր ժողովը կամ հոգաբարձութիւնը իր ընտրութիւնից ճիշտ երկու օր յետոյ, այն է օգոստոս 19-ին 1879 ամի, ունենում է իւր առաջին նիստը դանձապետ, այժմ հանգուցեալ, պրն. Ասրի Միքայէլեանի տանը՝ ուսուցիչների ռոճիկների կարգաւորման համար։

Տարաբաղդաբար ստուարակազմ տետրակի միայն մի աննշան մասն է բռնուած այդ գործադիր ժողովի ատենական արձանագրութիւններով։ Յանկարծ ժողովներն ընդհատուել են և չգիտցւում պատճառը և նաև այն, թէ արդեօք կայ սրանց շարունակութիւնը մի այլ տետրակում։

Ժողովները եղել են շատ կանոնաւոր, օրինաւոր արձանագրութեամբ և միշտ անդամաց բոլորի ստորագրութեամբ։

Ըստ մեր յիշած արձանագրութեան տետրակի, գործադիր ժողովն ընդամենը ունեցել է ժա. (11) նիստ և նրանց պաշտօնավարութիւնը վերջացել է հոկտ. 24-ին։ Ուրիշ խօսքով, մենք ունինք նոցա երկու ամիս և 4 օրուայ պաշտօնավարութեանց, ինչպէս յիշեցինք, շատ կանոնաւոր նիստերի արձանագրութիւնները միայն։

Երկրորդ նիստի-24 օգոստոս—որ տեղի է ունեցել առաջնորդարանում-օրակարգի հարցերը եղել են.—

ա. վարժարանի բացման խնդիրը,

բ. պրն. Յ. Խիզանեանցի առաջարկութիւնը (ռուսաց լեզուի ուսուցիչ)

գ. Վարժարանի ծառայի ռոճկի որո-

Մի բան, որ շատ օրինակելի է և յիշատակելի, այդ այն է, որ ոչ մի հարց, ոչ մի կարգադրութիւն, որքան էլ աննշան լինէին դրանք, ոչ ոք անհատաբար իրագործելու իրաւունք չունէր, եթէ դա նախապէս չէր ենթարկուել գործադիր ժողովի քննութեան ու որոշման։

Այս հաստատուն օրէնքը շատ պարզ ու բացորոշ կարելի է նկատել երրորդ նիստի—31 օգոստոս՝ գումարուած առաջնորդարանում - արձանագրութեան մէջ։

Այս նիստում մշակուել է գործադիր ժողովի համար մի ներքին կանոնագիր և կատարուել պաշտօնաբաշխութիւն։

Մեր սասծօրինականութիւնը հաստատելու համար՝ շատանանք միայն առաջ բերելով երկու յօդուածներ այդ ներքին կանոնադրութիւնից, որով խիստ դատապարտւում է ինքնագլխութիւնը։

Յօդ. 8. Գանձապետի պարտաւորութիւնն է յատուկ տետրակներով վարժարանի դրամագլխի և ել ու մուտքի հաշիւները օրինաւորապէս պահել՝ ստանալիք փողերը ստանալ՝ ուսուցիչների և ծառայի ռոճիկը վճարել՝ պէտք եղած մանաւոր ծախքեր անել, և վեց ամիսը մէկ անգամ հաշիւ տալ գործադիր ժողովին, սակայն ոչ մի դէպքի մէջ չէ կարող արտակարգ կարգի ծախսեր անել՝ կամ գործադիր ժողովից որոշուած ուսուցչաց ռոճիկները ինքնակ. կամ մէկ կամ երկու միայն գործակալների ասութեամբ աւելացնել՝[2]] կամ նորանց աւելի ռոճիկ տալ առանց գործադիր ժողովի բոլոր անդամների վաւերացման, և պակաս եղած փողը ինքը պէտք է վճարէ։

Յօդ. 9. Եկեղեցւոյ երեցփոխի պարտաւորութիւնն է գործադիր ժողովին իւրեան տալիք հրահանգների համեմատ յատուկ տետրակներով եկեղեցւոյ հասոյթի և առանձին ծախքերի հաշիւը օրական թուականով օրինաւորապէս պահել և իւրաքանչիւր երեք ամիսը մէկ անգամ հաշիւ տալ գործադիր ժողովին և առանց գործադիր ժողովին հաւանութեանը արտաքոյ կարգի ծախքեր չէ կարող անել։

Այստեղից պարզ է. ուրեմն, նա և այն օրէնքը, որ հները սրբագործել են, որով երեցփոխութիւնը զատ, առանձին կամ անկախ պաշտօն չէ, այլ անհրաժեշտաբար կապուած և կից է հոգաբարձութեան, որի հսկողութեան ենթակայ է նորա անդամ-երեցփոխը։

Եւ մեր կարծիքով անբաժան էլ պէտք է մնայ այդ պաշտօնը, որովհետև դպրոցն ու եկեղեցին ենթակայ են ժողովրդից ընտրեալ նոյն կոլլեգիալ հոգաբարձական մարմնին, որ հաւաքաբար պատասխանատու է հասարակութեան, իսկ հոգաբարձութեան իւրաքանչիւր անդամն էլ անհատաբար պատասխանատու է հաւաքական-մարմին հոգաբարձութեան։

Եւ շատ աւելի գործնական է, որ մի անհատ աւելի շուտ ենթակայ, հաշուետու և պատասխանատու լինի մի մասնաւոր յանձնախմբի քան մի հասարակութեան, որն իբրև մեծ ամբողջութիւն և ոչ անմիջապէս շահագրգռուած կամ ոչ պատասխանատու մէկը, չէ կարող գալ և հաշիւ պահանջել մի երեցփոխից, գանձապետից և այլն։ Մեր շեշտած այս ձեւը աւելի շուտ կառնի գեղծման առաջ, եթէ երբ և իցէ այդպիսի բան լինի, քան եթէ երեցփոխը լինէր բոլորովին անկախ և ազատ հոգաբարձութիւնից։

Նախքան գանալը բուն խնդրին, միջանկեալ այսքանն էլ ասենք, որ № 21-ի ծանօթութեան մէջ մեր «տնօրէն» բառին «նախագահ» տուած իմաստը ճիշտ չէ եղել։

Հոգաբարձական տնօրէն անդամը միաժամանակ և դպրոցի տեսուչն է, որ լիազօր է դպրոցում, սակայն ըստ ներքին կանոնագրի 10,11,12,13,14,15, և 16 յօդուածների ենթակայ և պատասխանատու է գործադիր ժողովին։ Հոգաբարձութեան նախագահը, ինչպէս կտեսնեն ընթերցողները, կոչուելիս է եղել ատենակալ խորհրդական, որ միշտ երկու հոգուց է բաղկացած եղել և նախագահը համարուել է իսկական նախագահ։

Համաձայն III նիստի որոշման—31 օգոստոսի—պաշտօնները բաշխուել են այսպէս.—

Ատենակալ խորհրդականք	Ծատուր խան Սէթխանեան Աբրահամ Յ. Վարդանեան
Տնօրէն	Նազար Գորոյեան
Օգնականք	Յովհաննէս Նազարեանց Մհտ. Սիմէօն Թումանեանց

Գանձապետ Ասրի Միքայէլեան

Երեցփոխ Ղազար Մելիք Բաբաջանեան

Ատենադպիր Խաչատուր Տր. Զաքարեանց

Վերջին արտաքոյ կարգի նիստում — 24 Հոկտ. 1879 Թ. տեղի ունեցած առաջնորդարանում — տնօրէն պ. Ն. Գորոյեանցի «ժամանակաւոր բացակայութեան խնդիրը» օրակարգին իւթ լինում է և որոշւում, որ առ ժամանակ այդ պաշտօնը յանձնուի «սրբազան Առաջնորդին մերում Տռն. Գրիգորի Մուշեղեան»-ի, որին օգնական է նշանակւում պ. Ալէքսանդր Գորոյեանցը։

Այժմ անցնենք գործադիր ժողովի նիստերի արձանագրութեանց, որ այնքան համառօտ, ամփոփ և կտրուկ են եղել միշտ։

19 Օգոստոսի 1789.

Առաջին նիստ

Գործադիր ժողովն տեղի ունեցաւ Պրն. Ասրի Միքայէլեանցի տունը։

Ա. Վարժապետաց ռոճիկների քանակութիւնը որոշելու խնդիրը։

Ա. Նկատելով որ վարժարանի մուտքը չէր բաւականանար ծախքը[3]) գործադիր ժողովն որոշեց վարժապետներին հետևեալ ռոճիկները տալ.

Տր. Մեսրովպ. Փափազեանին տարեկան 120 թմ. բայիջ տիվան, ամսէ ամիս 30 ման. վճարելով.

Պրն. Յովհաննէս Խիզանեանցին Ռուսերէն լեզուի վարժապետին, տարեկան նոյնպէս 120 թմ. ամսէ ամիս վճարելով. Միրզայ Աւագ Աֆտանդիլեանցին նոյնպէս 120 թմ. վճարելով.

Սարգաւագ Յարութիւնին Աբգարեան տարեկան 72 թուման բայիջ տիվան, ամսէ ամիս 18 ման. վճարելով։ Միրզա Ա՞ծատուր Փանուելեանցին նոյնպէս տարեկան 120 թմ բայիջ տիվան, ամսէ ամիս 30 ման. վճարելով

Միրզայ Մամատ Ալի Պարսկերէնի դասատուին՝ տարեկան 72 թմ. բայիջ տիվան ամսէ ամիս 18 ման. վճարելով։

[illegible]	Ծատուր խան Սեթխանեան Աբրահամ Յ. Վարդանեանց Նազար Յ. Գորոյեանց Յովհաննէս Նազարեանց Ասրի Միքայէլեան Երեսփոխ Ղազար Ա. Մել. Բաբաջանեանց Խաչատուր Տէր Զաքարեանց Մհսի. Սիմէօն Թումանեանց

24 Օգոստոս

Երկրոդ նիստ

Գործադիր ժողովն տեղի ունեցաւ Առաջնորդարանի մէջ.

Ա. Վարժարանի բացման խնդիրը.

Բ. Պրն. Յ. Խիզանեանցի առաջարկութիւնը

Գ. Վարժարանի ծառայի ռոճկի որոշումն։

Ա. Որոշուեցաւ վարժարանը բանալ Օգոստոս ամսի 27-ին։

Բ. Յ. Խիզանեանցի հակառակ Օգոս. 19 ընդունած պայմանադրութեանը և երկու տարուայ կապակցութեան պայման առաջարկութեանը համար՝ պաշտօնից արձակուեցաւ գործադիր ժողովէն։

Գ. Վարժարանի ծառային որոշուեցաւ տալ ամսին 2 թուման բայիջ դիվան

Ծատուր խան Սէթխանեան
Աբրահամ Յ. Վարդանեանց
Նազար Յ. Գորոյեան
Ասրի Միքայէլեան
Երեցփոխ Ղազար Ա. Մ. Բաբաջանեան.
Խաչատուր Տէր Զաքարեան
Մհտի. Սիմօն Թումանեան

(Շարունակելի) Ա. Տ. Վ.

Իւերի Դրութիւնը Տանկաստանում

Իտտիհատ-Դաշնակցական տապալումը. Օսմանեան պարլամէնտի կըրկին ու փակումը։ Իթթիլաֆ-Հնչակեան բլոկի յաջողութիւնը.

Տաճկաստանում Օսմանեան սահմանադրութիւնից ցայսր իշխող և կառավարական կուսակցութիւն է եղել Իտտիհատը կամ «Մ և Յ.»-ը։ Սրա ծրագիրն է չճանաչել բաղկացուցիչ ազգերի-Հայերի, Մակեդոնացիների, Արաբների, Ալբանների և այլն-ինքնավարական իրաւունքները, ոչնչացնել նոցա ունեցած և սուլթաններից շնորհուած արտօնութիւնները ջնջել քրիստոնեայ տարրերի էլ պատրիարքների առանձնաշնորհումները և ապա այդ բոլոր ժողովուրդներին բերել լցնել Օսմանցիացման խառնարանը։ Այդ կուսակցութիւնը եղել է հետևող թուրք կենտրոնացման սիստեմի և ապազգայնացման քաղաքականութեան

Դաշնակցականները Կիլիկիոյ 20,000 հայերի կոտորածից յետոյ՝ համբուրեցին յանցաւոր և բռնաւոր ձեռքը Իտտիհատականների՝ համերաշխութիւն կնքելով նրանց հետ։ Վերջին պարլամենտական ընտրութիւն.էլ միացան հայ ազգի սուլթանաբաշխ յայտնի արտօնութիւնները խպառ մերժող այդ կուսակցութեան հետ՝ հակառակ հայ մամուլի զգուշացում.։Դ-երն իրենց յայտնի եւ անծածկելի սխալը և շահասիրական այդ քայլը «արդարացնում» էին նրանով, թէ՝ «Իտտիհատը օրուայ ուժեղ, իշխող և տիրող կուսակցութիւնն է. եթէ նրան հակառակ գնանք կվնասուենք։» Այսպիսով նոքա որդեգրում և սրբագործում էին այն ծանր մեղադրանքը, որով տարիներից ի վեր դատապարտում են Մեծ Հայ Օրմանեանին, որ նոյնպէս տիրող հակառակ չէր ուզել իր պաշտօնավարութեան օրով, որ հայերը նորէն չյարգուէին կամ «չըֆխասուէին»։

Ինչ որ է, «Հայ ազգի միակ պաշտպան» Դաշնակցութիւնը Իտտիհատին քաղաքական լուծեցուին անկելուց յետոյ, այսօր դառնալէս խաբուելուց բացի, նրա հետ տապալուեց Տանկաստանում և տապալուեց յաւիտենական նախանձի դրոշմի ճակատին։

---

[1]) Սկիզբը տես «Միտք» 21-ի II յաւելուածը, Յուլիս 26.

[2]) Մերն է ընդգծումը։

[3]) Իրենց հայրերին չհաւանող և «յոյժ յառաջադէմ» նոր սերունդը, ընդհակառակը, առանց մուտքն ի նկատի ունենալու կիլաւում չաղ ռոճիկներ բաշխելով «աղորդ» սնանկացրեց դպրոցը և մի գեղեցիկ օր էլ, առանց կարմրելու, վերկացաւ և յայտարարեց, որ դպրոցը դրել են «յառաջդիմական շաւղի» վրայ։ Ականջներդ կանչէ «համերաշխական և համագործակցական» իրեւ-բեխար խմբակ—Վայ հայ ժողովրդին, որ բրակերեաներն ու փարիսեցիներն են նրա կուլտուրտրեգերները։

Կամակատարութիւնը դէպի Իտտիհատը մինչև այն աստիճան էր հասնում որ մինչ Ալբան հերոս չորս պատգամաւորները բողոքում են Օսմանեան պարլամէնտում՝ Հայաստանում, Ալբանիայում և Մակեդոնիայում թափուող արեան և շարունակուող կոտորածների դէմ, մեր Դաշ-կան 11 պատգամաւորները նստում են այնտեղ խղճահանգիստ և լուռ՝ արժանի պէս ու «դաւաճանի» դեր ստանձնում և վստահութեան քուէ տալիս 194 ձայնով ընդդէմ 4-ի, այն դահլիճին ու կառավարութեան, որ երկու օր յետոյ տապալւում է օպօզիցիայի և... աֆիցերութեան... պահանջով:

Իտտիհատի սուկալի տապալմամբ հրապարակի տէրն է դառնում Իթթիլաֆը-որի հետ բլոկ էին կազմել Հնչակեանները-որ բաղկացուցիչ ազգերի առանձնաշնորհմանց, ինքնավարութեանց պաշտպան է և որի ագիտացիայով գլուխ եկաւ Ալբանական անշիջելի ապստամբութիւնը, որ տապալեց երբեմնի դիկտատոր Մահմուդ Շէվքէթ Փաշային, Իդդիհադին և պառլամէնդի էլ փակման առիթ հանդիսացա .

Իտտիհատի և նրա կլիենդ Դաշնակցութեան տապալմամբ, ինչպէս ասացինք, ասպարէզը մնում է ազատական Իթթիլաֆին:

Ահա թէ ինչ է ենք կարդում այս մասին «Մշակի» շնորհալի թղթակից Շառայլի յօդուածում, գրուած Յուլիս 14-ին.

> Հիմա բաղդը կժպիտի Իթթիլաֆականներու: Հետևաբար կերևայ թէ Հնչակեաններն են, որ պիտի թատերաբեմեն վրայ գան: Հաճելի նորութիւն մը պիտի ըլլար ազգին համար [1]), եթէ այս կուսակցութիւնը որ նկուն մնացած է սահմանադրութենէն այս կողմ, երբէք դեր մը չկարենալով կատարել, հիմայ, երբ բաղդը իրեն կժպտի, ինքն ալ չգլտորի այն սխալներուն և անխոհեմութիւններուն մէջ, որոնք Դաշնակցականները զզուելի ըրին ազգին:...

Դաշնակցականք այս հեռապատկերին առջև սոսկում կզգան, վասըն զի այս անգամ չպիտի կարենան վեց սիւնեակներու վրայ մարդաչափ գիրերով տպել՝

«Քաղաքացինե՛ր, ողջունեցէ՛ք Իթթիհատ-Դաշնակցութիւն ընտրելիներուն ի նպաստ»:

Եւ այս մարդիկ հիմա կպնդեն (?? խ.) թէ իրենք շատուց ըսած էին, թէ ընտրութիւնները օրինապէս չեն կատարուած (!!?? խ.) Եթէ ապօրէն էին ինչո՞ւ քաղաքցիները կյորդորէին մասնակցել ընտրութիւններուն:

«Մշակ» № 160,24 յուլիս.

Ողջունելով ի բոլոր սրտէ Իթթիլաֆ-Հնչակեան յաջողութիւնը, յոյս ունենք, որ իր հերթին Իթթիլաֆը իր շըրջանկատ, հետաւել և խոհեմ ընթացքով գործն այնպէս խմառութեամբ կտանի, որ կհեռացնի վրանոս փոթորիկը Օսմանեան կայսրութեան գլխից: Միայն բաղկացուցիչ տարրերին բաւարարելով է, որ անվթար կմնայ ամբողջականութիւնը Օսմ. կայսրութեան և միայն այդ ոչ-շովէն կառավարութիւնն է, որ հայերին կարելի կդարձնի թաղմաց և Գրէյին, որ Իտտիհատի բռնութիւնները և Տաճկաստանի այս վերջին կրկզիսը նկատելով իր ճառում ասել է... պէտք կլինի խնամակալութիւն հաստատել Տաճկաստանի վրայ...

Ա. Տ. Վ.

[1]) Մերն է ընդգծումը

Թիւրք օֆիցերների Միութեան յայտարարութիւնը

Օսմանեան բանակի օֆիցերութիւնը նկատելով երկրի մեծ տագնապը, մի ընդարձակ յայտարարութեամբ դիմում է արել երկրի օֆիցերութեան:

Բերում ենք որոշ հատուածներ այդ մանիֆեստից.

«Օֆիցերներ և յարգելի ընկերներ,... Նորէն երևցաւ մեր ազգային անկումին վտանգը: Կենթադըրուէր թէ օսմ. հայրենիքն ազատած էր սահմանադրութիւն հռչակուելով և յառաջ կերթար խաղաղութեան ճամբուն մէջ: Ընդհակառակը անիկա ընդառաջ կերթայ կործանումի, նոյն արագութեամբ՝ ինչպէս Աբդուլ Համիդի օրով....Եւրոպայի մէջ այն կարծիքըն յառաջ եկաւ, թէ սահմանադրութիւն անկարող է երկարաձգելու օսմ. կայսրութեան կեանքը, ուրիշ խօսքով թէ օսմանցիներն՝ ալ իրաւունք չունին գոյութիւն ունենալու իբր անկախ տէրութիւն... տեսնելով որ սահմանադրութիւնը նսեմացնելու պատրուակին տակ մենք կշարունակէինք ու նոյն իսկ կըգերազանցէինք նախկին րէժիմին գործը... Օսմանցիները տակաւին տիրացած չեն սահմանադրական ազատութիւններուն, որոնք կէտ նպատակին եղած էին չորս տարի առաջուան զինուորական ըմբոստութեան:

Օֆիցերներ, հայրենիքը ամենքէն, մանաւանդ բանակէն կպահանջէ զոհողութեան ոգի և քաղաքական կորով, որովհետև այլապէս մեր վրայ պիտի հրաւիրենք անէծքը ապագայ սերունդներուն և ազգին պժգանքի առարկայ պիտի ըլլանք՝ անտարբեր ըլլալնուս հանդէպ սահմանադրութեան բռնաբարումներուն, որուն վրայ մենք երդում ըրած ենք... Մեր նպատակն է... լիակատար գործադրումն սահմանադրական սկզբունքներու....Զինուորական միութիւնը հետևեալ ձգտումները պիտի հետապնդէ Ա.) Արդիւնաւոր կառավարութեան տեղ դնել ուրիշ մը, որ ի վիճակի ըլլայ շահելու Եւրոպայի վստահութիւնը ու կազմուած ըլլայ յարգուած և կարող անձնաւորութիւններէ: Բ.) Արգելել անպատասխանատու տարրերուն խառնուել կառավարական գործերուն. Գ.) Լուծել երեսփ. ժողովը, երբ լուրջ քննութիւն մը կատարելով ապացուցուի թէ վերջին ընտրութեանց [1]) արդիւնքները չեն համապատասխաներ ազգին կամքին, և նոր ընտրութիւններ կազմակերպել այնպէս մը, որ ոստիկանութիւն կամ ոստիկան [2]) ջոզը վճռապէս ընտրական գործերուն»... Ապա բազմաթիւ այլ պահանջներ անելուց և «չլիսռի տաւ» բաւարարութիւն պահանջելուց յետոյ, սպառնում են, եթէ իրենց չլսեն, «այն ատեն մեր խումբին պաշտօնը կզադրի մասը առանց խտրութեան ամեն միջոց ի գործ պիտի դնէ հեռացնէ զամէն անոնց, որ կընդդիմանան մեր պահանջումներուն ընդունուելուն»:

Վատ ամպեր են կուտակուել Կիսալուսնի պետութեան գլխին: Ցանկանք նա խաղաղուի առանց մի կաթիլ արիւն թափելու և առանց փոթորիկների: Քաղուած «Բիւզանդիոնից»

[1] և [2]) Ակնարկում է Իտտիհատ-Դաշնակցական ընտրութիւններ, որ կատարուել են ծեծ ու ջարդով, բռնութեամբ և աջօրինաբար, մինչ այն ատեան որ Եւրոպական թերթեր էլ բողոքեցին: Ս. Խ.

Բարոյական ախտաժէտ զառանցութեան լպիրշ պատկերը

Պատահաբար ձեռքս անցաւ Ամերիկայում հրատարակւող հայ Համիդների օրգան «Հայրենիքի» վերջին համարներից մէկը, ուր զետեղուած էր մի յօդուած Ատրպատակարի այժմեան քաղաքական դրութեան մասին: Հայհոյանքների ու զրպարտութեանց այդ տապրակի մասին խօսելն անգամ աւելորդ կլինէր, եթէ մի հոգեկան հիւանդ մարդու ցնդաբանութեանց մէջ ընկած չլինէր Ա. Տ. Վարդանեանի անունը: Աւելորդ ենք համարում այստեղ մի առ մի հերքել «Հայրենիքի» մէջ երևան եկած սապատուղեղ դժոխային արարածի բազմաթիւ խոսինուացիաները մի մարդու հասցէին, որի հողաթափներըն անգամ արձակելու արժանի չէ որդնուղեղ մոլար վատորդին: Ստիպուած ենք միայն յիշել որ դեռ երէկ Շիրվանզադէն «Հորիզոնի» էջերում «գոռում էր» «մի՛ շահագործէք Լրագրի հաւատը» և ըստ ամենայնի իրաւացի այդ կանչը դեռ չլռած, այսօր մենք ևս ստիպուած ենք խմբագիրների ուշադրութիւնը հրաւիրելու սոյն օրինակ երևոյթների վրայ ու ասելու «մի՛ հաւատացէք ամեն այդ տեսակի մրոտութեանց, բարեխղճութիւն ունեցէք գէթ մի թեթև ստուգութիւն կատարելու Ձեր թղթակցութիւնների մասին և ապա միայն Ձեր թերթի սիւնեակները ոռոգեցէք նմանօրինակ ցինիկ զրպարտութիւններով, որոնց հեղինակները օրէնքի և արդարութեան առաջ կոր ի գլուխ դէպի դաժանագիր աշխատանքը ուղևորելու ստիպուած կլինէին»:

Վա՜յ ձեզ, որ զուրկ էք խղճմիտ վերաբերմունքից, թուք ու մուր Ձեր ճակտին:

Քաղաքացի

ԼՈՒՐԵՐ

ԹԱՒՐԻԶ

Արամեան դպրոցի նորընտիր հոգաբարձութիւնը ստանձնել է իւր պաշտօնը և գումարում է իւր հերթական նիստերը:

Նորեկների ընդունելութիւնը Արամեան և Ս. Ան. երկս. դպրոցներում կսկսուի օգոստ. 17-ից և կտևի մինչև Օգոստ. վերջը:

Լիլաւի ընտրուած և հրաժարուած «այա հոգաբարձուներն»[1]) տեղ Յուլիս 22-ին կանչուած ընդհ. ժողովին ոչ ոք չէր գնացել:

Մեզ հաղորդում են, որ Լիլաւում Յուլիս 29-ին ժողովում ընտրուած են հոգաբարձուներ երեսփոխաններից:

«Մշակ»-ի և «Հորիզոնի» վերջին համարներից տեղեկացանք, որ տեղւոյս Յ. Դաւիթեանը վերադառնում է իր նախկին պաշտօնին:

[1]) Տես Թէհրանի-Արշալոյս է. Ն-ի յօդուածի հիւանդ լեզուն ու երեւակայութիւնը:

Լսում ենք, որ Սրփահտար Ազամը մի հեռագրով առաջարկել է Շուջա-էդ-Դովլէն, որ ճանապարհները շինուեն հարթուեն կառքերի հեշտութեամբ երթևեկելու համար: Ըստ լրոյ Շօջա-էդ-Դովլէն կարգադրել է որ ճանապարհները շինուեն մինչև Միանա, ուր ըստ ասութեան ժամանել է մեծ իշխանը:

Արամեան և ս. Աննայեան երկսեռ դպրոցների նորընտիր հոգաբարձութեան կողմից պ. Ալէքսան Բաբխուդարեանը խնդրում է յարգոյ ծնողներից, որ նոքա բարեհաճեն ազդարարել իրենց զաւակներին, որ յետ այսու ոչ ոք նրանցից Աժածնի այգու ծառերի ճիւղերը կամ մրգերը չփրցնեն, և առհասարակ ամենից ամենախիստ արտայայտ վերաբերմունք ցոյց տան դէպի ազգային ընդհանրական սեփականութիւնները:

Աղքատախնամի յարգոյ վարչութեան ուշադրութիւնն ենք հրաւիրում քաղաքիս փողոցներում թափառող և մուրող 5-7 տարեկան աղքատ ժառուկ Յովհաննիսեանի վրայ:

Լսում ենք Սփահտար Ազամն առաջարկել է իրեն օթեան պատրաստուի Ալադափուն, որ բռնուած է ռուսներով: Թէ ինչ պատասխան է տրուած, դեռ մեզ յայտնի չէ:

Ատրպատական

Միանդաբի շրջանի հայերի դըրութիւնը մնում է նոյնը: Դատաւորը անտարբեր է: Առաջնորդարանը բողոք ներկայացրեց նահանգապետութեան:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Փոխառութիւն

Սըր Էդուարդը Գրէյը պատասխանելով Պարսկական փոխառութեան առթիւ եղած հարցին՝ ասաց.

—Միակ աւանսը (կանխավճարը) տրուել է Բրիտանօ-Ռուսական տէրութեանց կողմից Պարսից կառավարութեան Մարտ 7-ին: Նորերս խօսւում է ոչ մեծ փոխառութեան մասին: Քանի որ որոշուած չէ դեռ Ռուսաստանի տալիք փոխառութեան չափը, ուստի փոխառութիւն այժմ չի կարող լինել: Անգլիայի ցանկութիւն է որ տրուած փողերը-Պարսկաստանի ներքին անկարգութիւններ ի սկատի ունենալով-գործադրուէին ժանդարմերիայի վերակազմութեան և հարաւումհաստատուն կար գի վերականգնման վրայ:

ԱՐՏԱՔԻՆ

Ֆրանկօ-Ռուսական Ծովային Դաշնակցութիւն

Պարիզ—Դիպլոմատիական շրջաններում և ընկերութեան մէջ մեծ հետաքրքրութիւն զարթեցրեց «Temps»ի հաղորդակցութիւնը Ֆրանկօ-Ռուսական դաշնակցութեան մասին, որ որոշելու է երկու դաշնակիցների նաւատորմի դերը պատերազմի դէպքում:

Ֆրանկօ-Ռուսական դաշնակցութիւնը կնքուել է 1892 թուի օգոստոս 2-ին, սակայն այդ վերաբերում էր ցամաքային ուժերին. ծովային ուժերի դաշնակցութիւնը վերջերս է մշակուել և ստորագրութիւնը կհաստատի Ֆրանսիոյ արտաքին գործերի մինիստր պ. Պուանկարէի Պետերբուրգ ժամանելուց յետոյ, որ պէտք է տեղի ունենայ լինի Յուլիս 28-ն.

Բեռլին. Գերմանական մամուլը անվրդով լսեց այդ նոր դաշնակցութեան մասին. որովհետև դա բոլորովին բնական էր գտնում երկու Նախկին դաշնակիցների համար։ Բացի այդ, այդ մասին Սազոնովը,—Ռուս. արտ. գործ. մինիստրը-Բալտիական տեսակցութեան միջոցին յայտնել էր գերմ. կանցլերին. ուստի այդ դաշնակց. ամենևին մի սիւրպրիզ չէր Գերմ. բարձր շրջաններում։

Տաճկաստան

Վիեննա։ Հաշտութեան բանակցութիւններ. «Նէոյէ Ֆրայէ Պրէսէ»ն հաղորդում է. Հաշտութեան գաղտնի բանակցութիւնները, որոնք ամբողջ մի ամիս շարունակւում էին Ժէնևում Տաճկական և Իտալական լիազօրների միջև, այժմ նոր նշանակուած Տաճկական կաբինէտից յետոյ, ընդհատուած են, բայց շուտով նորից կըվերանորոգուին։ Արդեօք Տաճկաստանը կնշանակի նոր լիազօրներ, թէ կըհաստատի հներին—յայտնի չէ։ Տաճիկ կառավարութիւնը ցանկանում է շարունակել բանակցութիւնները, սակայն առանց պետութեանց միջամտութեանց։ Այդպէս է և Իտալիոյ ցանկութիւնը։

ՉԻՆԱՍՏԱՆ

Նոր խաղախագիտական խորհրդատու

Բեռլին. Պէկինից հեռագրում են այն մասին, որ տեղիս անգլիացի ժուռնալիստ, «Times»-ի թղթակից միստր Մօրրիսօնը Իւանշիկայից հըրաւիրուել է որպէս խորհրդական՝ հինգ տարուայ կօնտրակտով։

Գերմ. մամուլը միանգամայն անբարեացակամօրէն է ընդունել այդ լուրը։ Մօրրիսօնին համարում են Գերմանիոյ թշնամի և հաւատացած են, որ նա կօգտուի իւր ազդեցութիւնից, իբրև խորհրդական ի կորուստ Գերմանական շահերի Չինաստանում։

«Р. Сл.»-ից №-168,21 Յուլիս

«Ран. Утро» լրագրին հաղորդում են Սօֆիայից, որ Բօլգարիայի և Աստրիայի միջև գաղտնի համաձայնութիւն է կայացել, որի հիման վրա Աւստրիան պաշտպանելու է Բօլգարիայի շահերը Արևմտեան Մակեդօնիայում և Օդրինի վիլայէթում, իսկ բօլգարական կառավարութիւնը ճանաչում է Աւստրիայի իրաւունքները Արևմըտեան Մակեդօնիայում և Ալբանիայում։ Եթէ վերջինս գրաւի վիլայէթներից մէկն ու մէկը, Բօլգարիան իր զօրաբանակը իսկոյն կուղարկի թիւրքական և սերբիական սահմանագլուխը։ Եթէ պատերազմ ծագի Աւստրիայի և Ռուսաստանի միջև, Բօլգարիան պիտի միայ չէզոք և փակի իր սեծովեան նաւահանգիստները ռուսաց ռազմանաւերի առաջ։ Դրա փոխարէն Աւստրիան խոստանում է թոյլ չը տալ որ Ռուսաստանը գրաւի Թիւրքիայի այն նահանգները, որոնք յիշեալ համաձայնութեամբ վերապահվում են Բօգարիայի, և պարտաւորւում է՝ համոզել իր բոլոր բանկերին անսահմանափակ կրէդիտ բաց թողնել բօլգարական կառավարութեանը, հոգ տանել Բօլգարիայի տնտեսական զարգացման մասին։ Եթէ Թիւրքիան պատերազմ յայտնէ Բօլգարիային, Աւստրիան իսկոյն կը գրաւէ Հին-Սերբիան, Ալբանիան, Արևմտեան Մակէդօնիան և իր զօրաբանակը կը միացնի բօլգարականի հետ։ Ի նկատի առնելով Թիւրքիայի խառնակ վիճակը և անկման հաւանականութիւնը, այդ համաձայնութիւնը նախատեսում է նաև հիւանդ մարդու ժառանգութեան խնդիրը իրենց միաբան գործակցութեամբ, Աւստրիան կը վերցնի այդ դէպքում Հին-Սերբիան, Նօվօ-Բազարի սանջակը և Արևմտեան Մակեդօնիան Սալօնիկով միասին։ իսկ Բօլգարիան՝ Մակէդօնիայի մնացեալ մասը՝ Օդրինի վիլայէթը և Դէդէ-Աղաջը։

Բօլգարական մշտարթուն թագաւոր Ֆիրդինանդը տեսնելով Օսմանեան պետութեան այս վերջին օրերի ծանր կրիզիսը, ծպտեալ գնացել է Կարլսբադ։ Նման հանգամանքից օգտուելով՝ փոքրիկ Չերնօգորիան այս քանի օրերս խլել է Տաճկաստանից իրեն սահմանակից մի փոքր հողամաս։

Մուժամբարի «Գիւղատնտես» Ընկ-թեան վիճակախաղը բացուելու է ուրբաթ, Օգոստոս 3-ին, կենտրոնականի պարտիզում, ժամը $6^1/_2$-ին։

Ստացուած հրատարակութիւններ

—

1 «Բազմավէպ» թիւ 4, Ապրիլ
2 «Հանդէս Ամսօրեայ» թիւ 7, Յուլիս
3 «Կայծ» № 1 երկու օրինակ
4 «Պատանի» Ալմանախ տետր IV (IV) Թիֆլիզ

«Հանդէս Ամսօրեայ» № 8, Օգոստոս.
«Երիտասարդ Հայաստան» Նիւ-Եօրք, № 22, Յուլիս 27.

5 «Ո՞ր մէկուն Եռւէն» Թադերախաղ 5 արարուածով. տպագրութիւն և հրատարակութիւն «Ազգի» թիւ 7, Բօստօն, 1912 թ.
6 «Կոհակ» №№ 23, 24, 25, 26,
7 «Ամասիա» գաւացիների կիսամսեայ հանդէս թիւ 16, 30 Մայիս։
8 «Հովիտ» 24, 25, 26, 27
9 Միացեալ Ընկերութիւնք Հայոց (1880-1908)

—

ԵՌԱՄԵԱՅ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

21 Օգոստոս 1908—1911 Օգոս. 31

Կ.Պօլիս. Տպագրութիւն Յ. Մատթէոսեան, 1912 թ.

Պ Օ Ս Տ Ա Ր Կ Ղ

Փարիզ—Պ. Ա. Տ. Կարապետ-ին. Հոգաբարձական տարաբաղդ ընտրութեանց վերաբերող անմիջական յօդուածների պատճառով՝ Ձեր պատասխանի տպումն ուշացաւ։ Յաջորդիւ։

Փարիզ.—Մ. Պ.-ին Յաջորդիւ։

Փարիզ.—Պ. Սեդ. Յովհաննիսեանին յուլիս 29-ին Ձեր անուամբ խմբ. թեանս հասցէին «Կոհակ» է ստացուել, հաճեցէք ստանալ։

Ղազբին.—Մեր բաժանորդներից 4-ին-. Շնորհակալութեամբ ստացանք և ձեր փոխադրած 80 ղռանը։

Ռէշտ.—Մ. Պատմ.-ին. Շնորհակալութեամբ ստացանք ձեր փոխադրած 100 ղռանը. խնդրում ենք ապառիկ սիրողներից էլ գանձել և հասցնել.

Մարաղա.—պ. պ. Բաժանորդներ, 6-րդ ամիսն էլ լրացաւ...

Խմբագիր-հրատարակիչ՝
Ա. Տ. Վարդանեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՓԱՐԻԶ ՄԱԳԱԶԻՆ

Կանացի հրաշալի բլուզներ, Եգիպտական էշարփներ և վզկապներ, կանացի քաթանէ կասթիւմներ, Բաթիստ գոյնզգոյն կտորներ, փէշեր և ետւպկաներ, Զանազան արժէքի լէրշիկներ։

Թարմ շվէդական շօկօլադ և բօմբօն։

ԲԱՑՈՒԵԼ Է ԲԱՂԱՔԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑՈՒՄ ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ բուժարան (լէչէբնիցա)
Արժէքները չափազանց մատչելի են։ Աղքատները բժշկւում են բոլորովին ձրի։ Հիւանդներ ընդունւում են առաւօտեան ժամը 8—1, երեկոյեան ժամը 3—6
ՀԻՄՆԱԴԻՐ ԱՏԱՄՆԱԲՈՅԺ՝ ՄԱՏԻՆԵԱՆ

ՊԱՏԱՆԻ Գրական, Գեղարուեստական, քննադատական ալմանախ. բաժնեգին է Թիֆլիզում 1ր. դուրսը 1,25 արտասահման 5 ֆր. Թիւրքիա 20 ղրշ. հասցէ Tiflis Surp-Minassky, № 26 Missak Eprikiantz

---

ԲԱԶՄԱՎԷՊ —Ազգային-բանասիրական-գրական-գիտական ամսաթերթ 70-րդ տարի, բաժնեգինն է ֆր. 10, րբ. 4, դոլ 2, ղրշ. 50
Հասցէ՝ Rédaction de la Revue «Bazmavep»
St. Lazare Venise (Italie)

ԿԱՅԾ —Օրգան Սօց-Դեմ. Հնչ. Կուս. Պօլսոյ Ռւս. միութեան. Հասարակական գիտական,
ԳՐԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ 2-ՐԴ ՏԱՐԻ
Բաժնեգինն է { Թիւրքիա 12 ղրուշ, Ամերիկա 1 դոլ. արտասահման 4 ֆր.
հասցէ Rédaction «KAIDZ»
poste Centrale 97. Constantinople (Turquie]

ԿՈՀԱԿ Պատկերազարդ թերթ, գրական, քաղաքական, տնտեսական և ընկերային. Տէր և տնօրէն Հմ. Արամեան
Բաժնեգինն է { Պօլիս և գաւառները 15 ղրուշ, Ամերիկա . 1 դոլ, Արտասահման . 5 ֆր. Ռուսիա և Պարսկ. 2 րբլ.
հասցէ Rédaction «GOHAG» B. P. Centrale, 125 Constontinople

ՀԱՆԴԷՍ-ԱՄՍՕՐԵԱՅ—Հայագիտական Ուսումնաթերթ. 26-րդ տարի բաժնագինն է ամեն երկրի համար ֆր. 15, րուբլի 6, ղրուշ 7.— Rédaction de la Revue «Handes Amsorya» VII/2 Mechitharistensgasse-4 Vienne [Autrche]

ТАВРИЗСКАЯ ГОРОДСКАЯ
Больница

Возобновился амбулаторный и стаціонарный пріемъ больныхъ, ежедневно отъ 10—12 часовъ.
Бѣдные по запискѣ отъ г. Байларбеги принимаются безплатно

Завѣдующій больницей
докторъ Ваганъ Геворковъ

ՎԱՐՁՈՒԵԼԻՔ ՏՈՒՆ

Փնտռւում և հարկաւոր է 5-6 սենեակներից բաղկացած ընդարձակ մի տուն, որ ունենայ անպայման նաև ախոռատուն, առնուազը, երեք ձիի համար։

Գերադասւում է մեծ պարտիզով և օդասուն տունը։

Վարձու տուողները դիմելու են պարոն Վաղարշակ Զաքարեանին։

ԴՕՔՏՕՐ ՍԱՐԳԻՍԸ

Ամէն ուրբաթ օրերը ժամը 2-ից, կէսօրից յետոյ, ձրի քննում է աղքատների և չքաւորների երեխաների ծաղիկները։

Տպարան ,, ՓԱՐՈՍ ''